

Պ-013-12.02.2019-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

«ՎԻՃԱԿԱՆԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ եւ 16-րդ կետերով.

15) խաղասրահ՝ շինության ներսում այն տարածքը, որտեղ կազմակերպվում եւ անց- կացվում են վիճակախաղեր կամ ուղղակի հնարավորություն է ստեղծվում մասնակցել վիճակախաղին:».

16) Բուքմեքերային գրասենյակ-վայր, որտեղ Կազմակերպիչը իր աշխատակիցների անմիջական մասնակցությամբ հնարավորություն է ընձեռնում խաղի մասնակիցներին խաղադրույքներ կատարել:

**Հոդված 2.** Օրենքի 4-րդ հոդվածում՝

- 1) 2-րդ մասից հանել «, բացառությամբ ինտերնետ տոտալիզատորի» բառերը
- 2) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Ինտերնետ տոտալիզատորը համարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպված, եթե ինտերնետ տոտալիզատորի կազմակերպչի սերվերները տեղակայված են Հայաստանի Հանրապետության տարածքում:»

**Հոդված 3.** 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ը» կետում «միայն» բառից հետո լրացնել «համապատասխան լիցենզիայի հիման վրա ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման, ծրագրային ապահովման (ներառյալ շահման գործակիցների որոշման եւ իրացման ծառայությունները) եւ դրա սպասարկման ծառայությունների մատուցման գործունեություններով, կազմակերպչի աշխատակիցների համար եւ խաղասրահներում հանրային սննդի կազմակերպման գործունեությամբ, ինչպես նաեւ:» բառերով:

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Ժդ» կետով.

«Ժդ) լիազոր մարմնի սահմանած կարգով ստուգում է խաղասրահ մուտք գործել ցանկացող ֆիզիկական անձանց անձը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև սույն օրենքի 5.1-ին հոդվածով սահմանված՝ տվյալ քաղաքացիների՝ տոտալիզատոր մասնակցությունը սահմանափակող՝ օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռի արկայության հանգամանքը:»

**Հոդված 4.** Օրենքը լրացնել նոր 5.1-ին, 5.2-րդ և 5.3-րդ հոդվածներով.

«Հոդված 5.1. Մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացու՝

*տոտալիզատորին (այդ թվում ինտերնետ տոտալիզատորին) մասնակցությունը սահմանափակելու կարգը*

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ գլխով սահմանված կարգով՝ մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը սահմանափակվելու դեպքում վճիռ կայացրած դատարանը վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, վճռի օրինակն ուղարկում է լիազոր մարմին:

2. Լիազոր մարմինը վճիռն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, վճռի մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տոտալիզատորների (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորների) բոլոր կազմակերպիչներին՝ նրանց ուղարկելով վճռի էլեկտրոնային կամ պատճենահանված օրինակը, որպեսզի նրանք արգելեն օրինական ուժի մեջ մտած վճռով մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ձանաչված անձի մուտքն իրենց խաղասրահներ, ինչպես նաեւ գրանցումը ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված ինտերնետային կայքում, իսկ գրանցված լինելու դեպքում՝ ինտերնետ տոտալիզատորին մասնակցելու հնարավորությունը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի կողմից քաղաքացու գործունակության սահմանափակումը վերացվելու դեպքում դատարանի վճիռն ուղարկվում է լիազոր մարմին՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նշված քաղաքացիների կողմից կնքված գործարքները շահագրգիռ անձանց պահանջով դատարանը կարող է անվավեր ճանաչել:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նշված քաղաքացիների վերաբերյալ տվյալների բազայի վարման կարգը սահմանում է լիազոր մարմինը:»:

*«Հոդված 5.2. Վիճակախաղի կազմակերպմանը ներկայացվող տարածքային պահանջները*

1. Լիզենցիա ունեցող վիճակախաղի կամ անմիջականորեն տոտալիզատորի յուրաքանչյուր կազմակերպիչ կարող է կազմակերպել մեկական բուքմեյքերական գրասենյակ կամ անմիջականորեն (խաղասրահի մրջոցով) տոտալիզատոր միայն Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի վարչական սահմաններում, Վայոց Ձորի մարզի Զերմուկ համայնքի վարչական սահմաններում, Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի վարչական սահմաններում, Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում, ՀՀ մարզերի յուրաքանչյուր վարչական կենտրոնում և Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանում՝ կրթական եւ պատմամշակութային օջախներից, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված հեռավորությամբ եւ չափանիշներին համապատասխան տարածքներում:

2. Արգելվում է տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին դրամական միջոցներ մուտքագրել եւ ելքագրել կանխիկ եղանակով, բացառությամբ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորի կազմակերպման դեպքի կամ բուքմեյքերային գրասենյակի միջոցով՝ անձի նույնականացման և նրա օրենքով սահմանված տարիքի հասած լինելու հանգամանքը ստուգելու պարտադիր պայմանով: Նշված հաշիվները համալրվում են եւ հաշիվներից գումարը կանխիկացվում է միայն վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով:

3. Արգելվում է Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոմատացված սարքավորումների միջոցով վիճակախաղի՝ ոչ խաղարկությունով, խաղարկությունով, համակցված, տոտալիզատորի (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորի) կազմակերպումը:

*«Հոդված 5.3 «Վիճակախաղերի կազմակերպման գործունեության իրականացման համար նախատեսված շենք-շինությունների՝ խաղասրահների, բուքմեքերային գրասենյակների յուրաքանչյուրի սպասարկման սրահի ընդհանուր մակերեսը չի կարող գերազանցել 200 քառակուսի մետրը»*

**Հոդված 5.** Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ «ե1» կետով.

«ե1) խախտել է սույն օրենքի 5.1-ին հոդվածով սահմանված պահանջները՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ մեկ միլիոն ՀՀ դրամի չափով:

**Հոդված 6.** Օրենքի 15-րդ հոդվածի 1-ի կետը լրացնել նոր «գ1» կետով.

«գ1) եթե կազմակերպիչը խախտել է սույն օրենքի 5.2 հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:»

**Հոդված 6<sup>1</sup>** Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել գ) կետով՝

գ) եթե կազմակերպիչը խախտել է Օրենքի 5.2 հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով սահմանված պահանջները:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի նոյեմբերի 1-ից, բացառության Օրենքի 5.2-րդ հոդվածի 3-րդ կետի, որը ուժի մեջ է մտնում օրենքի հրապարակելու հաջորդող 7-րդ ամսվա 1-ից:

Սույն օրենքի պաշտոնական հրապարակման պահից վեց ամսվա ընթացքում լիազոր մարմինը սահմանում է խաղասրահ մուտք գործել եւ ինտերնետային կայքում գրանցվել ցանկացող ֆիզիկական անձի անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթն ստուգելու կարգը եւ «Վիճակախաղերի մասին» օրենքի 5.1-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված քաղաքացիների վերաբերյալ տվյալների բազայի վարման կարգը:

*Առաջին երկրորդ ընթերցում*

*Պ-013-12.02.2019-ՏՀ-011/1*

*ՏԵՂԵԿԱՆՔ*

*Օրենքի նախագծի փոփոխվող հոդվածների վերաբերյալ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՎԻՃԱԿԱՆԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ եւ 16-րդ կետերով.

15) Խաղասրահ՝ շինության ներսում այն տարածքը, որտեղ կազմակերպվում եւ անց- կացվում են վիճակախաղեր կամ ուղղակի հնարավորություն է ստեղծվում մասնակցել վիճակախաղին:».

16) Բուքմեքերային գրասենյակ-վայր, որտեղ Կազմակերպիչը իր աշխատակիցների անմիջական մասնակցությամբ հնարավորություն է ընձեռնում խաղի մասնակիցներին խաղադրույքներ կատարել:

### **Հոդված 2.** Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «, բացառությամբ ինտերնետ տոտալիզատորի» բառերը:

2) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

~~«3. Կոգելվում է օտարերկրյա պետություններում կազմակերպված վիճակախաղերին մասնակցությանը հնարավորության ստեղծումը, ինչպես նաև այդ խաղերի գովազդումը Հայաստանի Հանրապետության տարածքում եւ «ԱՄ», «ՀԱՅ» դոմենային տիրույթներում:~~

Ինտերնետ տոտալիզատորը համարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպված, եթե ինտերնետ տոտալիզատորի կազմակերպչի սերվերները տեղակայված են Հայաստանի Հանրապետության տարածքում, ունեն Հայաստանի Հանրապետության համապատասխան համացանցային հաղորդակարգի (IP) հասցե, (Internet Protocol Address— համացանցային հաղորդակարգի հասցե) եւ տեղեկատվական ռեսուրսները գտնվում են «ԱՄ» եւ/կամ «ՀԱՅ» դոմենային տիրույթներում:»:

### **Հոդված 3.** 5-րդ հոդվածում՝

1, 1-ին մասի «ը» կետում «միայն» բառից հետո լրացնել «համապատասխան լիցենզիայի հիման վրա ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման, ծրագրային ապահովման (ներառյալ շահման գործակիցների որոշման եւ իրացման ծառայությունները) եւ դրա սպասարկման ծառայությունների մատուցման գործունեություններով, կազմակերպչի աշխատակիցների համար եւ խաղասրահներում հանրային սննդի կազմակերպման գործունեությամբ, ինչպես նաև:» բառերով:

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ժդ» կետով.

~~«ժդ) լիազոր մարմնի սահմանած կարգով ստուգում է խաղասրահ մուտք գործել ցանկացող ֆիզիկական անձանց օրենքով սահմանված տարիքի հասած լինելու հանգամանքը անձը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև սույն օրենքի 5.1-ին հոդվածով սահմանված տվյալ քաղաքացիների տոտալիզատոր մասնակցությունը սահմանափակող՝ օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռի առկայության հանգամանքը:»:~~

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1. մասով.

«1.1 Կազմակերպիչը ապահովում է հինգ հարյուր միլիոն դրամի չափով ֆինանսական երաշխիքի առկայություն, որը ապահովում է վիճակախաղերի կամակերպման գործունեության ողջ ընթացքը եւ ուղղված է մասնակիցների շահերի պաշտպանության ապահովմանը: Ֆինանսական երաշխիքը կարող է օգտագործվել միայն վիճակախաղի կազմակերպչի սահմանված եւ լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգին համապատասխան՝ վիճակախաղի շահող մասնակիցների եւ պետության հանդեպ ունեցած պարտավորությունների կատարման նպատակով:

Սույն օրենքի իմաստով ֆինանսական երաշխիք է համարվում բանկի կամ ապահովագրական կազմակերպության կողմից տրված երաշխիքը:»

**Հոդված 4.** Օրենքը լրացնել նոր 5.1-ին եւ 5.2-րդ հոդվածներով.

*«Հոդված 5.1. Մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացու՝ տոտալիզատորին (այդ թվում ինտերնետ տոտալիզատորին) մասնակցությունը սահմանափակելու կարգը*

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ գլխով սահմանված կարգով՝ մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը սահմանափակվելու դեպքում վճիռ կայացրած դատարանը վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, վճռի օրինակն ուղարկում է լիազոր մարմին:

2. Լիազոր մարմինը վճիռն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, վճռի մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տոտալիզատորների (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորների) բոլոր կազմակերպիչներին՝ նրանց ուղարկելով վճռի էլեկտրոնային կամ պատճենահանված օրինակը, որպեսզի նրանք արգելեն օրինական ուժի մեջ մտած վճռով մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված անձի մուտքն իրենց խաղասրահներ, ինչպես նաեւ գրանցումը ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված ինտերնետային կայքում, իսկ գրանցված լինելու դեպքում՝ ինտերնետ տոտալիզատորին մասնակցելու հնարավորությունը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի կողմից քաղաքացու գործունակության սահմանափակումը վերացվելու դեպքում դատարանի վճիռն ուղարկվում է լիազոր մարմին՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նշված քաղաքացիների կողմից կնքված գործարքները շահագրգիռ անձանց պահանջով դատարանը կարող է անվավեր ճանաչել:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նշված քաղաքացիների վերաբերյալ տվյալների բազայի վարման կարգը սահմանում է լիազոր մարմինը:»:

*«Հոդված 5.2. Վիճակախաղի կազմակերպմանը ներկայացվող տարածքային պահանջները*

1. Բուքմեքերային գրասենյակ կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատոր կարող է կազմակերպվել միայն Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի վարչական սահմաններում, Վայոց ձորի մարզի Զերմուկ համայնքի վարչական սահմաններում, Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի վարչական սահմաններում, Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում՝ կրթական եւ պատմամշակութային օջախներից, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հեռավորությամբ եւ չափանիշներին համապատասխան տարածքներում:

Լիցենզիա ունեցող վիճակախաղի կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորի յուրաքանչյուր կազմակերպիչ Հայաստանի Հանրապետության մարզերի յուրաքանչյուր վարչական կենտրոնում և Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական

շրջանում կարող է կազմակերպել մեկ բուքմենթերական գրասենյակ կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) )տոտալիզատոր կրթական և պատմամշակութային օջախներից,պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից,հիվանդանոցներից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված հեռավորությամբ և չափանիշներին համապատասխան տարածքներում:

2. Արգելվում է տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին դրամական միջոցներ մուտքագրել եւ ելքագրել կանխիկ եղանակով, բացառությամբ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորի կազմակերպման դեպքի կամ բուքմենթերային գրասենյակի միջոցով` անձի նույնականացման և նրա` օրենքով սահմանված տարիքի հասած լինելու հանգամանքը ստուգելու պարտադիր պայմանով:: Նշված հաշիվները համալրվում են եւ հաշիվներից գումարը կանխիկացվում է միայն վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով:

3. Արգելվում է Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոմատացված սարքավորումների միջոցով վիճակախաղի` ոչ խաղարկությունով, խաղարկությունով, համակցված, տոտալիզատորի (այդ թվում` ինտերնետ տոտալիզատորի) կազմակերպումը:»:

Եթե կազմակերպիչը խախտել է 5.2-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով սահմանված պահանջները,ապա այդ խախտումները սահմանել որպես Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված լիցենզիայի գործողության դադարեցման համար առանձին հիմքեր:

5.2 կետի 3-րդ մասը ուժի մեջ է մտնում օրենքի հրապարակելու հաջորդ (յոթերորդ) ամսվա 1-ից:

«Հոդված 5.3 Բուքմենթերական գրասենյակների համար սահմանել ընդհանուր 200քմ սպասարկման սրահ:

**Հոդված 5.** Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր` «ե1» կետով.

«ե1) խախտել է սույն օրենքի 5.1-ին հոդվածով սահմանված պահանջները` խախտման յուրաքանչյուր դեպքի համար` ~~հինգ հարյուր հազար~~ մեկ միլիոն դրամի չափով:

**Հոդված 6.** Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում

1) «ա) կետում» «կետերով» բառից հետո լրացնել «կամ 1.1-րդ մասով» բառերը:

2) լրացնել նոր «գ1» կետով.

«գ1) եթե կազմակերպիչը խախտել է սույն օրենքի ~~5.2 հոդվածով~~ 5.2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:»

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածով լրացվող 5.2-րդ հոդվածի 1-ին մասով բուքմենթերային գրասենյակին կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորի կազմակերպմանը ներկայացվող պահանջի, որն ուժի մեջ է մտնում 2019 թվականի նոյեմբերի 1-ից:

Սույն օրենքի պաշտոնական հրապարակման պահից վեց ամսվա ընթացքում լիազոր մարմինը սահմանում է խաղասրահ մուտք գործել եւ ինտերնետային կայքում գրանցվել ցանկացող ֆիզիկական անձի անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթն ստուգելու կարգը եւ «Վիճակախաղերի մասին» օրենքի 5.1-րդ հոդվածի 1-ին մասով ~~5.1-րդ հոդվածի 5-րդ մասով~~ սահմանված քաղաքացիների վերաբերյալ տվյալների բազայի վարման կարգը:



**Ա Մ Փ Ո Փ Ա Յ Ե Ր Թ**

**ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՎԻՃԱԿԱՆԱԴԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ**

**(փաստաթղթային կոդ՝ Պ-013-12.02.2019-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արթուր Դալլաքյան	Ավելացնել հոդված 5-ի 3-րդ կետը	<p>«Վիճակախաղերի կազմակերպման գործունեության իրականացման համար շենք-շինությունների ընդհանուր մակերեսների սահմանափակումները»</p> <p>Առաջարկում եմ՝</p> <p>Բուքմեյքերական գրասենյակների համար սահմանել ընդհանուր 200քմ սպասարկման սրահ:</p>	Ընդունվել է	Ընդունվել է



2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արկադի Խաչատրյան	Նախագիծ հոդված 3-րդ	Նախագծի 3-րդ հոդվածում <<2>>-րդ կետով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող(ժդ)կետը լրացնել հետևյալ բառերով՝«<<ինչպես նաև սույն օրենքի 5.1-ին հոդվածով սահմանված՝ տվյալ քաղաքացիների՝տոտալիզատոր մասնակցությունը սահմանափակող՝ օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռի առկայության հանգամանքը>>»:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արկադի Խաչատրյան	Նախագիծ հոդված 4-րդ	Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող Օրենքի 5.2-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասությունը լրացնել հետևյալ բառերով՝«<< անձի նույնականացման և նրա օրենքով սահմանված տարիքի հասած լինելու հանգամանքը ստուգելու պարտադիր պայմանով>>»:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արկադի Խաչատրյան	Նախագիծ հոդված 5-րդ	Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսված Օրենքի 5.1-ին հոդվածով սահմանված պահանջները խախտելու դեպքը սահմանել ոչ թե որպես կազմակերպչին տուգանելու համար հիմք,այլ Օրենքի 15-րդ հեղվածի 1-ին մասով սահմանված լիցենզիայի գործողության կասեցման համար առանձին հիմք,սահմանելով նաև կասեցման հաստակ ժամկետ,կամ բարձրացնել տուգանքի չափը:	Ընդունվել է տուգանքի չափի բարձրացումը	Ընդունվել է տուգանքի չափի բարձրացումը
5.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արկադի Խաչատրյան	Նախագիծ հոդված 6-րդ	Նախագծի 6-րդ հոդվածում <<2>>-րդ կետով Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող(գ1)կետում<<5.2 հոդվածով>> բառերը փոխարինել<<5.2-րդ հոդվածի 2-րդ մասով>>բառերով՝սահմանելով նաև կասեցման հստակ ժամկետ:	Ընդունվել է մասնակի	Ընդունվել է մասնակի

6.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արկադի Խաչատրյան	Նախագծի հոդված 5.2	Եթե կազմակերպիչը խախտել է 5.2-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով սահմանված պահանջները, ապա այդ խախտումները սահմանել որպես Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված լիցենզիայի գործողության դադարեցման համար առանձին հիմքեր:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արկադի Խաչատրյան	Նախագծի հոդված 4-րդ	Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող Օրենքի 5.2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ նոր պարբերությամբ՝ <<Վիճակախաղի մի կազմակերպչի կողմից (անմիջականորեն իր կամ դուստր կազմակերպության միջոցով) մեկ բուքմեյքերական գրասենյակի կամ անմիջականորեն (մեկ խաղասրահի միջոցով) տոտալիզատոր կարող է կազմակերպել նաև Հայաստանի Հանրապետության սույն մասում չնշված այլ յուրաքանչյուր մարզում որևէ մեկ համայնքի վարչական սահմաններում և Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանի վարչական սահմաններում կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հեռավորությամբ և չապանիչներին համապատասխան տարածքներում>>:	Չի ընդունվել	Չի ընդունվել

8.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արկադի Խաչատրյան	Նախագծի հոդված 7-րդ	Նախագծի 7-րդ հոդվածում «2019 թվականի նոյեմբերի 1-ից» բառերը փոխարինել «2020 թվականի հունվարի 1-ից» բառերով:	Չի ընդունվել	Չի ընդունվել
9.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիփան Փաշինյան	Նախագծի հոդված 4-րդ	<p>Նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող 5.2-րդ հոդվածի առաջին մասը լրացնել նոր պարբերությամբ.</p> <p>««Լիցենզիա ունեցող վիճակախաղի կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորի յուրաքանչյուր կազմակերպիչ Հայաստանի Հանրապետության մարզերի յուրաքանչյուր վարչական կենտրոնում և Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանում կարող է կազմակերպել մեկ բուքմեյքերական գրասենյակ կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատոր կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված հեռավորությամբ և չափանիշներին համապատասխան տարածքներում»»:</p>	Ընդունվել է	Ընդունվել է

10.	ՀՀ Կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառից առաջ լրացնել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ» բառերը՝ նկատի ունենալ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
11.	ՀՀ Կառավարություն	Նախագծի հոդված 3-րդ	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետում «օրենքով սահմանված տարիքի հասած լինելու հանգամանքը» բառերը փոխարինել «անձը հաստատող փաստաթղթերը» բառերով՝ նկատի ունենալով նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները: Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 3-րդ մասի համաձայն համապատասխան փոփոխություն պետք է կատարվի նաև Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետում: Ուստի առաջարկում ենք Օրենքի 2-րդ մասի «ե» կետը խմբագրել՝ նախատեսելով, որ լիցենզիայի հայտը մերժում է, եթե հայտին կից ներկայացված չեն սույն օրենքի 5-րդ հոդվածի 1.1.մասով սահմանված՝ օրենսդրությամբ նախատեսված չափով ու ձեւավորման պայմաններով և կարգով ֆինանսական երաշխիքի առկայության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:	Ընդունվել է մասնակի	Ընդունվել է մասնակի
12.	ՀՀ Կառավարություն	Նախագծի հոդված 6-րդ	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին կետում «կետերով» բառից առաջ լրացնել «ա» կետում» բառերը՝ նկատի ունենալով, որ վերոհիշյալ բառը նախատեսված է հենց այդ կետում, ոչ թե 1-ին մասում:	Ընդունվել է	Ընդունվել է

13.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասում «5.1-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը փոխարինել «5.1-րդ հոդվածի 5-րդ մասով» բառերով՝ նկատի ունենալով, որ քաղաքացիների վերաբերյալ տվյալների բազայի վարման կարգը սահմանելու վերաբերյալ դրույթները սահմանվում են նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 5.1-րդ հոդվածի 5-րդ մասով:	Ընդունվել է	Ընդունվել է
14.	ՀՀ ԱԺ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյան	Նախագծի 2-րդ հոդված	Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի ավելացված 3-րդ մասը շարադրել հետևյալ շարադրությամբ.  «3. Ինտերնետ տոտալիզատորը համարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպված, եթե ինտերնետ տոտալիզատորի կազմակերպչի սերվերները տեղակայված են Հայաստանի Հանրապետության տարածքում:»	Ընդունվել է	Ընդունվել է
15.	ՀՀ ԱԺ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյան	Հոդված 5.2 3-րդ մաս	5.2 կետի 3-րդ մասը ուժի մեջ է մտնում օրենքի հրապարակելու հաջորդ (յոթերորդ) ամսվա 1-ից:	Ընդունվել է	Ընդունվել է